№ 26 ԹԷՀԵՐԱՆ ՇԱԲԱԹ 16 ՅՈՒԼԻՍԻ 1894 № 26

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ" ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱԲԵՐԱՆ 50 ՀԱՄԱՐՁԱԿԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան: Առանձին համարները 5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում գրւում են միմիայն, խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամէն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գիւղական կրթութեան գործը Դավրէժում— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Դավրէժից. Երեխաների հիւծման պատճառներից մէկն (Առողջապահական դիտողութիւն) Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—Յայտարարութիւններ:

ԳԻՒՂԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԴՈՐԾԸ ԴԱՎՐԷԺՈՒՄ

„Շաւղի" 24-րդ համարում մենք տպեցինք նուիրատուութեանց մի ցուցակ յօգուտ Դավրէժի "Սէր" ընկերութեան և այդ առթիւ մենք հարկ ենք համարում մի քանի նկատողութիւններ անել:

Ամեն անգամ երբ մենք մտածում ենք Դավրէժի ազգային հաստատութեանց վերայ, մենք անմիջապէս պատկերացնում ենք մեր աչքի առաջ մի բաւական զարգացած հասարակութիւն, որ ունի ապահովացրած դրամագլուխներ իւր դպրոցների համար, որ ունի կազմած մի տեսակ ընդհանուր հասկացողութիւն նոցա վարչութեան մասին, և որ առաւելն է, մի ունևոր դասակարգ որ սովորաբար խոյս չէ տալիս մասնակցել ազգային գործերի մէջ, աւելացրէք դորա վերայ նաև թեմական առաջնորդի անմիջական հսկողութիւնը և օժանդակութիւնը ամեն կարևոր հարցերում, և այդ կը լինի արդէն յաջող հանգամանքների մի համագումար, որից զուրկ են պարսկահայ ուրիշ կեդրոնները:

Այդ յաջող հանգամանքները տալիս են, ճշմարիտ է, բաւական գոհացուցիչ արդիւնքներ. բայց մենք միտք չունինք գովասանական մի ճառ գրել դավրիժէցիների վերայ, մենք մատնանիշ կանենք միայն մէկ թոյլ կողմի վերայ, որ այդ ընդհանուր ներդաշնակութեան մէջ մի աններդաշնակութիւն է կազմում:

Մի հասարակութիւն որքան զարգանում է, այնքան նորա մէջ եսական, ինքնիրան նուիրուած զգացումները տեղի են տալիս հասարակական օգտին նուիրուած զգացումների. և այդ էլ կատարւում է աստիճանաբար: Ամենից առաջ, բնականաբար, մարդ մտածում է իւր քաղաքի հասարակական զարգացման մասին. բայց այդ առաջին քայլից յետոյ՝ դալիս է բընականաբար երկրորդը, մտածել նաև ուրիշ քաղաքների հաստատութիւնների վերայ: Այդ հոգածութիւնը որ մենք տարածում ենք ազգային յառաջադիմութեան վերայ, եթէ անկեղծ է, եթէ դրդուած է միայն ազնիւ զգացումներից, նման է մի իւղի կաթիլի, որ ջրի երեսին տարածուելով աւելի և աւելի ծաւալւում է:

Արդ, դավրիժէցիները ցոյց են տուել որ իրանք հետաքրքրւում են իրանց տեղական հաստատութիւններով, և դորանց հասցրել են մի ապահով վիճակի: Արդեօք, այդ առաջին գեղեցիկ քայլից յետոյ, պէտք է կանգ առնել: Ոչ, պատասխանում ենք, եթէ առաջին քայլը դրդուած է մի ազնիւ շարժառիթից, անպատճառ կը հետևին և միւսները:

Պարզենք մեր խօսքը: Յայտնի է արդէն որ Դավրէժի մէջ կազմուած է „Սէր" ընկերութիւնը գիւղացիների մէջ դպրոցներ բանալու համար: Այդ ընկերութիւնը թէև մի քանի տարիներից ի վեր կազմուած, չէ ստանում տեղական հասարակութիւնից այն խրախոյսը որին արժանի է, և չէ կանգնած այնպէս սի պատուանդանի վերայ, որ արժանի լինի դավրիժէցիներին: Այն չնչին օգնութիւնը որ լինում է նոյն ընկերութեան, ոչնչով համապատասխան չէ նորա մեծ նպատակի հետ: Մենք հեռուից միայն հանդիսատես ենք և պատճառը չենք իմանում թէ ինչու՝ նմանապէս չենք տեսնում այդ ընկերութեան ղեկավարութեան մէջ ազդեցիկ մարդկանց մասնակցութիւնը, և դա շատ տրտմացնում է մեզ:

Մի այդքան ազնիւ գործ իսկապէս արժանի է աւելի մեծ ջանքերի և խրախոյսի, դավրիժէցիները, որոնք, ինչպէս ասացինք, կատարել են առաջին քայլը դէպ ի հասարակական օգտի գիտակցութիւնը, չեն կանգ առնել, կառնեն երկրորդ քայլը. և այդ ընկերութեանը կը տան այն լայն կազմակերպութիւնը և բարձր դիրքը որին նա արժանի է, և որին ինքեանք արժանի են:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

6 յունիսի 1894

Հայրիկի երկրորդ կոնդակը մեզ մօտ էլ արձագանք գտաւ Դավրէժում, որ պէտք է համարել մի տեղի չունեցած երևոյթ մեզ մօտ: Հայուհեաց ընկերութիւնը որը օգնում է Լիլաւայի օրիորդաց դպրոցի չքաւոր աշակերտուհիներին, մատակարարում է դպրոցի ձեռագործի նիւթերը, պահում է կար ու ձեւի արհեստանոց Դավրէժում, որտեղ՝ սովորում են Դավրէժի յայտնի ընտանիքներից օրիորդներ Լիլաւայի վերջին դասարանի մեծ աշակերտուհիների հետ միասին, այսքան բարիքներ անելուց յետոյ՝ նա չուզեց որ նսեմանան իրանց եղբայրակիցների աչքում իրանց ամուսինները, եղբայրներն ու ազգականները և ձեռնարկեց հանդանակութեան, որը շատ յաջող առաջ տարաւ, հաւաքելով Բերդաթաղում երկու հարիւր քսան թուման, իսկ Լիլաւայում հարիւր տասն հինգ թուման, և չը բաւականանալով սորանով, ապրիլ 30-ին իրանց օգտին տուած ներկայացման ամբողջ արդիւնքն էլ յատկացրեց կրկին սովեալների օգտին: Իսկ յունիս 3-ին ներկայութեամբ ս. առաջնորդի և երկու թաղերի պատուարժան հոգաբարձութեան և ուրիշ շատ երկսեռ հանդիսականների՝ տեղի ունեցան արհեստանոցի աշակերտուհիների քննութիւնը, Լիլաւայի տղայոց դպրոցում, որտեղ շարուած էին սեղանների վերայ աշակերտուհիների ձեւած ու կարածները: Կար և ձև աւանդել է օրիորդ Ս. Մատինեանը Գլոդզինական մեթոտով, իսկ հարթակը սովորեցրել է տիկին Օ. Ղազարեանց, եր-

կուսն էլ իրանց դասերը աւանդել են ձրի։ Քննութիւնը անցաւ շատ յաջող, երկու էքսպերտներ, որոնք հրաւիրուած էին իբր մասնագէտներ ներկայ լինելու քննութեանը, շատ գոհ մնացին կարգից։ Աշակերտուհիները ձևեցին և քաքեցին իրանց ընկերուհիների համար կուռտիկներ, ներկայութեամբ հանդիսականների. որը տևեց մէկ ու կէս ժամ։ Ինը հոգի՝ ստացան վկայականներ, որոնցից ց վեցը սովորել են վերնագրեստների ձև, իսկ երեքը՝ վերնագրեստ և ճերմակեղէն։ Վկայականները պէտք է ստորագրեն Հայուհեաց ընկերութեան նախագահը և էքսպերտները, որը պէտք է հաստատէ իւր կնքով և ստորագրութիւնով թէմիս ս. առաջնորդը։

—

Մայիս 23-ին սկսուեց բողոքականաց օրիորդաց դպրոցի քննութիւնները, որը տևեց երեք օր. այս տարի ունեցան մի ընթացաւարտ։ Իսկ 28-ին տեղի ունեցաւ նոյն ուսումնարանի սրահում մի հանդէս, որտեղ ընթացաւարտ օրիորդը և ուրիշ մի քանիսը կարդացին ճառեր, առաջինը համարեայ թէ ամբողջ պարբերութիւններ էր արտագրել և սեփականացրել իրան՝ „Բնաւորութեան կրթութիւնից“ և ուրիշ հեղինակներից. իսկ երկրորդինը՝ ինչպէս լսում ենք հաստատ աղբիւրներից, ուղղել և կոկել է մի պարոն, որը ատում և հալածում է ամբողջ բողոքական հասարակութիւնից։

Երգուեցան մի քանի երգեր և արտասանուեցան մի քանի գրութիւններ զանազան նիւթերի մասին, որոնցից յետոյ ուսումնարանի տեսչուհին բարձրացաւ բէմ և մի քանի խրատական խօսքեր ուղղելով ընթացաւարտ օրիորդին, տուեց նորան վկայականը։

—

Իսկ 27-ին տեղի ունեցան նոյն ուսումնարանի տղայոց դպրոցի քննութիւնները որը տևեց երեք օր։ Քննական ցուցակի մէջ առարկաներից աւելի երկար տեղ էր բռնում աղօթքը։ Դէ ընթերցող, դու ինքդ դուշակիր, թէ ինչպիսի քննութիւններ է կատարուում այդ ուսումնարաններում։ Յուլիս 1-ն տեղի ունեցաւ տղայոց ուսումնարանում հանդէս, որտեղ 4 հոգի ընթացաւարտները կարդացին ճառեր, վերջինը ծափահարուեցաւ, բայց նա էլ սթափեցրեց հանդիսականներին՝ իւր մնաս բարևն ասելով. յետոյ միայն յայտնուեցաւ, որ ուսումնարանի վարչութիւնը պահանջել է, որ իւր ազդեցութեան տակ թխուած. կարդացուին այդ ճառերը։ Երգուեցան մի քանի երգեր.

Տ.

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԻԻԹՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻՑ ՄԷԿԸ

(Առողջապահական դիտողութիւն)

—

„Մի ուսուցիչ, որին իւր ջղային հիւանդութեան պատճառով խորհուրդ էի տալիս օգտուել աւելի խարտ օդով“ հաղորդում է ջղային հիւանդութիւնների յայտնի բժիշկ պրոֆէսսոր Կրաֆտ-Էբինգը „առաւօտեան ժամը 7-ից մինչև երեկոյեան ժամը 2-ը դասեր էր աւանդում և ապա ժամը 3-ից մինչև 4-ը վազվզում էր սարերի վերայ։ Նորա հիւանդութիւնը իւր վարած կենցաղի աղաւաղած եղանակի շնորհիւ աւելի ևս զօրեղացաւ, որովհետև նա առաւօտուանից աշխատում էր մտաւորապէս, իսկ ճաշից յետոյ ֆիզիքապէս“։ Կեանքի այսպիսի այլանդակ եղանակ վարում են շատերը, որոնց ջղերը թէև դեռ թոյլ չեն, բայց կը ցանկային խոյս տալ ջղային այդ թուլութիւնից. նրանք յոգնեցնում են մարմինը, որ թարմ պահեն իրանց ոգին բայց չափազանց աշխատելով, դառնում են թոյլ և ջղային. այդ հիւանդութիւնը նրանց էլ է գրկում։ Սակայն ամենավատը այն է, որ այժմ շատ ծնողքներ և դաստիարակներ ստիպում են դպրոցական հասակի երեխաներին վարել կեանքի այդպիսի տնկանոն եղանակ։

Երեխաների ջղայնութիւնը,—ահա մեր շատ մասերում փայլող ժամանակի մութ կողմը։ Կարծւում է, որ այդ ջղայնութիւնը հետևանք է դպրոցական կրգամունքներով ծանրաբեռնուած լինելուն և աշխատում են մտաւորական յոգնածութեան հակադրել ֆիզիքական վարժութիւնները։ Այս միջոցը պէտք է, բայց այն հարկաւոր է բարեփոխել և գիտենալ իւր տեղին գործադրել։ Հէնց գործադրութեան այդ կէտի վերայ էլ մենք կամենում ենք դարձնել տալ ծնողների և դաստիարակների ուշադրութիւնը։

Հասարակութեան կրթուած մասի և բարձր շրջանների մէջ ընդհանրապէս տարածուած է այն սխալ հայեացքը, իբր թէ մտաւորական և ֆիզիքական աշխատանքները հակակշռում են իրար, որ ֆիզիքական վարժութիւնները մարդուս աւելի տրամադրում են դէպ մտաւորական պարապմունքները, այնպէս, որ նրանք եզրակացնում են, որ մեր մարմինը ուժի զանազան տեսակ պաշարներ ունի, առանձին ֆիզիքականի համար, առանձին մտաւորականի համար։ Նրանք կարծում են, երբ մենք մտածում ենք, մեր մկանները չեն լարւում և ընդհակառակն, երբ մենք զբաղուած ենք ֆիզիքական աշխատանքներով, մեր ուղեղը չէ կորցնում և ոչ մի հիւլէ իւր ուժերից։

Ֆիզիոլոգիական նորագոյն հետազոտութիւնները ոչ մի կերպ չեն հաստատում այդ ենթադրութիւնները։ Բայց վերջին տարիներս եղել են բաւական նշանաւոր փորձեր մեր մտաւորական գործունէութեան ազդեցութեան վերաբերմամբ մկանունքային ուժի վերայ։

Տուրինի հոգեբանութեան պրոֆէսսոր Ս. Մոսսո և նորա ընկերները առանձին գործիքների միջոցով չափեցին իրանց մկանների ուժը մտաւորական զօրեղ աշխատանքներից առաջ և յետոյ և եկան այն եզրակացութեան, որ մտածողութիւնը ոչ միայն յոգնեցնում է ուղեղը և ջղերը, այլ և մկանները։ Դասախօսութիւններ կարդալուց, քննութիւններ տալուց յետոյ նրանք աւելի փոքր ծանրութիւններ էին կարողանում բարձրացնել և մկանունքային աւելի թեթև աշխատանքներ կատարել, քան որ կատարում էին բնական պայմաններում։

Միւս կողմից, մի շարք գիտնական դիտողութիւններով ապացուցուած է, որ ֆիզիքական լարուած աշխատանքը լաւ չէ ազդում մարդուս հոգեկան կողմի վերայ։ Երկարատև գրօսանքից, շատ թիավարելուց, գիմնաստիկական շատ վարժութիւնների ց յետոյ, մենք աւելի պակաս ենք լինում տրամադրուած դէպի մտաւորական աշխատանքները և անպատճառ հարկաւոր է մի քիչ հանգիստ, որ ֆիզիքական աշխատանքի մեր մտքի վերայ թողած ազդեցութիւնը կամաց-կամաց անհետանայ։

Ուղեղի և մկանների փոխադարձ ազդեցութիւնը իրար վերայ շատ բնական է։ Յայտնի է, որ աշխատող մկանը քիմիապէս լուծւում է և նորա, այսպէս ասած յոգնութեան արդի ունքները ջոկւում են, որոնք յայտնի ձևով կազմում են կղկղանքներ։ Այս կղկղանքները պաղեցնում են կենսական ջերմութիւնը, իսկ յոգնածութեան արդիւնքները թունաւորում են նեարդերի և ջղերի գրգռուելու ընդունակութիւնը։ Աշխատանքից յետոյ վայելած հանգստի ժամանակ այդ մասերը հեռանում են մարմնից։ Պարզ է, որ մկանունքային յոգնածութեան արդիւնքների խմբումը արեան մէջ վատ է ազդում ուղեղի գործունէութեան վերայ։ Ֆիզիքական աշխատանքի ժամանակ յոգնում է և մեր ուղեղը, որովհետև և մեր մարմինը կազմում է մի անբաժան ամբողջութիւն. միևնոյն արիւնն է նիւթ տալիս բոլոր օրգաններին։ Հէնց այդ պատճառով էլ մտաւորական աշխատանքը յոգնեցնում է և մեր մկանները։ Ի հարկէ, մենք պարտաւոր ենք աշխատելու, որ սովորող երեխաները կրթ-

նէին հաւասար աստիճանով թէ
նապէս և թէ ֆիզիքապէս, բայց
ժամանակ մենք պէտք է աշ-
նորանց հանգստի միջոց էլ
այս տալով նորանց բոլորովին յոգ-
ց, տալ հանգստեան միջոց,
մտաւորական, նոյնպէս և ֆի-
ն աշխատանքներից յետոյ։
մեզնից որի համար է գաղտնիք,
պէս անկանոն են բաժանուած
երիտասարդութեան այս երկու
յարապմունքները։ Մտաւորական
աշխատանքից յետոյ նրանց ուղ-
ղում են կամ երկարատև զբօսան-
մ թէ գիմնաստիկական վարժու-
երի, և մտաւորապէս ֆիզիքապէս
և զբաղուած աշակերտներին
ում են նորից գրքերի մօտ մտա-
ն աշխատանքով զբաղուելու։ Եւ
դրա հետևանքը։
ելու համար նրանց ուղեղն է յոգ-
ֆիզիքական վարժութիւնների հա-
նց մկաններն են թուլացած։
խատանքն որկատարում է արդէն
օրգանը, շատ վատ է ազդում
զմի վերայ և շատ հեշտութեամբ
որդում է պարապողներին դէպի
մն։
ցաղավարութեան այս անկանոն
կողմն է մասամբ բացատրում այն
փաստը, որ շատ երեխաներ, չը
նրանց կատարած ֆիզիքական
թիւ վարժութիւններին և երկա-
զբօսանքներին դառնում են աւելի
ի ջղային և վերջապէս ստիպուած
ում թողնել դպրոցը։
կալի էր, որ մասնագէտ մանկա-
զբաղուէին յոգնածութեան այդ
ներով և որ ծնողները հաստա-
համոզուէին, որ երեխաները չը
մշտ աշխատեն, յոգնեցնեն ի-
ուղեղը։ Երեխաների համար ժա-
տք է լինին, երբ նորանք կարո-
ն իսկապէս հանգստանալ, այսին-
ինչ չանել։ Պէտք չէ շարունակ
ի ուղեղը զարգացնել ի վնաս
ի և ընդհակառակն, որպէս զի ե-
երը վերջը չը մաշուին։ Կարելի է
ելի ն ասել, մենք պէտք է կըր-
երեխայի ուղեղը և մարմինը ի-
չիւրը առանձին և ամեն մի աշ-
նքից յետոյ, փոյթ չէ թի որպիսի
ոանք է, տանք հանգստի միջոց
մարմնոյն։

Մ. Տ. Յ.,

4 թ. Դավրէժ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ատ աղբիւրներից լսում ենք որ
ում միջազգային առողջապահա-
կան մի նոր համաժողով է կայացել, ո-
րին, ինչպէս և Եւրոպական շատ պե-
տութիւնները, պարսից տէրութիւնն էլ
մասնակցել է։ Այդ համաժողովը նպա-
տակ ունի համաճարակ հիւանդութեանց
առաջն առնելու միջոցների վերայ խոր-
հիլ և նա որոշել է մասնաւորապէս, որ
պարսից ծոցի գլխաւոր նաւահանգստնե-
րում առողջապահական մարմիններ հաս-
տատուին։ Նորին կայսերական վեհա-
փառութեան կառավարութիւնը, կայա-
ցած այդ համաձայնութեանը ստորագրե-
լով, մարդկութեան և իւր ազգի շահերի
բարձր հոգածութեան մի նոր ապացոյցն
է տուել։ Յոյս ունինք որ այս նոր խոր-
հուրդի խելացի միջոցների գործադրու-
թիւնը իւր զգալի ազդեցութիւնը կու-
նենայ և կարդիլէ սարսափելի համաճա-
րակների կրկին վերադարձը, որպէս 1892-ի
խոլերան, որ այնքան ավերմանց և սգերի
պատճառ դարձաւ Պարսկաստանում։

—

Մենք կրկին յիշեցնում ենք մեր
թղթակիցներին որ ուշադրութիւն դար-
ձնեն իւրեանց հաղորդած լուրերի ճըշ-
դութեանը վերայ. մենք զգուշացնում
ենք նրանց, որ մենք ուշադրութիւն
ենք դարձնում նոցա հաղորդած լուրե-
րի հաստատուելուն կամ հերքուելուն,
և եթէ նոքա չեն կամենում իրանց
վարկը կորցնել խմբագրութեան աչքում,
թող ուշադրութիւն անեն իրանց գը-
րածներին։

—

Ս. Էջմիածնից և Թիֆլիսից ստա-
ցել ենք բազմաստորագիր գրութիւններ,
Գէորգեան ճեմարանի և ուսանողների
հարցին վերաբերեալ։ Այդ գրութիւնեն-
րին նայելով, ճեմարանը հետզհետէ
ընկնում է անելանելի և գուցէ վատ
դրութեան մէջ։ Գլխաւորապէս այն կէտ-
ը է աչքի զարնուում, որ ճեմարանի
վարող մարմինը, դէպի չարն է գործա-
ծում Վեհափառ Հայրիկի վստահու-
թիւնը և աշխատում է միշտ Նորա ու-
շադրութիւնից հեռու պահել ճեմարա-
նական մի քանի կարևոր խնդիրներ։ Թէ
այսպէս թէ այնպէս որովհետև „Շաւի-
ղի“ այժմեան „փոքրիկ դիրքը“ չէ նե-
րում, այդ կարգի գրութիւններ հրատա-
րակելով աւելի մեծ խնդիրներում ձեռ-
նամուխ լինել, այսու ամենայնիւ իրան
պարտք է համարում խոնարհաբար հը-
րաւիրելու Մեծ Հայրապետի անմիջա-
կան ուշադրութիւնը սոյն ազգօգուտ
հիմնարկութեան կարևոր խնդիրների վե-
րայ մանաւանդ որ, այսուհետև ճեմարանի
աշակերտութեան թիւը պակասացնելու
են, չենք կարծում որ ամբողջ հայութիւնը
այնքան աղքատացած լինի որ 200 հո-
գի աշակերտներով մի ճեմարանի պէտ-
քերը և ծախսը չը կարողանայ հոգալ,
քանի որ նորա աչքը, մանաւանդ այժմ,
դէպի կաթուղիկոսական գահը և նորա
հովանաւորած ճեմարանն է։

—

„Շաւիղի“ դադարման առթով, զա-
նազան անձերից հասնում են մեզ ցա-
ւակցական հեռագիրներ և նամակներ,
միանգամայն տեղեկանալ ուզելով այդ
բանին առիթ եղող պատճառները։
Մենք ինչպէս առաջ, նոյնպէս և այ-
ժմ կամք չենք ունեցել և մինչև իսկ
չունենք, մեր յարգելի ընթերցողների
հարցասիրութիւնը գոհացնել ուզելով,
մեր հակառակորդների, առ մեզ ունե-
ցած վարմունքը մի առ մի մատնացոյց
անել։ Ո՛ր մէկ հասարակական գործի,
մի հրատարակութեան խոչնդոտներ և
արգելքներ չեն պատահել, որ այս փոք-
րիկ թերթին չը պատահէր։ Էլ այդ տեղ
ինչ հարցնելու բան կայ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Մեր Բաթումի թղթակիցը յայտնում
է մեզ որ, երկուշաբթի յունիսի 27-ին
Բաթումում հեռագիր է սացուել, որ
յունիսի 23-ին հինգշաբթի ժամը 12-ին
բաթումից դուրս ելած „Վլադիմիր“
տնունով շոգենաւը, Օդեսայի մօտ սաս-
տիկ փոթորկի միջոցին գիպչելով մի
իտալական շոգենաւի խորտակուել է։
Ծովին զոհ են գնացել 51 հոգի և ա-
զատուել են 91 հոգի, որոնց մէջ եղել
են իշխանուհի Բէհբուդով և իւր որ-
դին. իսկ նորա քոյրը Գորգանովան որ
հիւանդ էր, իւր տկարութեան պատճա-
ռով չէ կարողացել աճապարել նաւակը
նստելու, որով և խեղդուել է։ Ազատ-
ուել են նաև ժամագործ Կացի կինը և իւր
որդին, վաճառական Խուդադովի ըն-
տանիքը և Թիֆլիսի նահանգական դա-
տարանի պրօկուրօրի օգնական Շմիդը։
Զոհ գնացողների մէջ յայտնի են Բա-
քուի գործարանատէր Տերէնտևի կինը
և բաքուցի յայտնի ցորենավաճառ Թու-
մայէվը։

—„Նոր-Դար“ լրագրից քաղում ենք
հետևեալ նկատողութիւնը։ Մեր ըն-
թերցողները պէտք է յիշում լինին, որ
„Նոր-Դարը“ քանիցս յարուցել է Հընդ-
կաստանի բանկերում թաղուած՝ ազգին
և եկեղեցուն հասանելի միլիոնների խըն-
դիրը։ Այն ժամանակ, որ ս. Էջմիա-
ծինը փող չէ ունեցել ս. Տաճարի վերա-
շինութեան համար. այն ժամանակ, որ
Երուսաղէմի ս. Յակոբեանց վանքը
պարտքի տակ ճնշուած՝ տառապում է

եղել, այն ժամանակ, որ մեր շատ վանքեր աւերակ դրութեան մէջ չը պահելու համար միջոցներ չեն ունեցել և միջոցների պակասութիւնից մեր բազմաթիւ գիւղեր մնացել են առանց դպրոցի և ս. Էջմիածինը „Արարատի“ ստացումը պարտաւորեցուցիչ անելով կամեցել է մի քանի կոպէկ ստանալ, մենք մատնացոյց ենք եղել ազգին և եկեղեցուն պատկանեալ այն կտակների վերայ, որոնք անգործադրելի մնալով, ազգը և եկեղեցին զրկւում են իրանց հասանելի մեծամեծ գումարներից։ Արդեօք Սպահանի գերապատիւ առաջնորդն այդ խնդրով պարապե՞լ է, արդեօք հետաքրքրուե՞լ է թէ ինչ ազգային հարստութիւններ կան թաղուած Հնդկաստանի անգլիական բանկերում. հարստութիւններ, որոնց օրինական ժամանակն անցնելով կամ մասնաւոր մարդկանց ձեռքն ընկնելով կորչում են ազգի համար։ Շատ ցաւալի է, եթէ ճշմարիտ Կալկաթայի հայոց եկեղեցու արժ. Յովհաննէս աւագ քահանայ Խաչիկը մեռել է։ Այդ պատկառելի ծերունին Հնդկաստանի հայոց գործերի և հարուստ կտակների կենդանի պատմութիւն էր և ամեն գործերին տեղեակ։ Քանիցս այդ պատկառելի ծերունին մեզ ուղղած նամակների մէջ գանգատուել է, որ ազգին և եկեղեցուն պատկանեալ հարստութիւններ անտէրութիւնից կորստեան են մատնուած. քանիցս նա խնդրել է մեզ, որ ս. Էջմիածնին դիմենք, որ մարդ գնայ Կալկաթա և թէ ինքը, հայր Յովհաննէսը, պատրաստ է ամեն տեսակ աջակցութիւն ցոյց տալու գործին։ Պատկառելի ծերունու ասելով, Նոր-Նախիջևանն էլ ունի գումարներ ստանալու և շատ դիւրութեամբ, բայց այդ գումարները կորչում են. կորչում են անտէրութիւնից և ս. Էջմիածնին, ազգին հասանելի մեծ գումարները։ Այդ մասին մեր ձայնը մնաց „ձայն բարբառոյ յանապատի“։ Չը գիտենք թէ ինչ է մտածում Սպահանի թեմի ս. առաջնորդն այդ մոռացուած հարստութիւնների մասին, բայց կարծում ենք, որ Հնդկաստանի թեմի պարտաճանաչ առաջնորդի գործը պէտք է լինի առանց յետաձգութեան այդ գործին հետևել և ինչ որ հարկաւոր է և կարելի՝ անել։

—Փարիզից հեռագրում են, որ բոլոր պետութիւնները. լօրդ Ռօզբէրին և լօրդ Քիմբըրլէյն հեռագրով Ֆրանսիայի տէրութեան ցաւակցութիւն և մխիթարութիւն են յայտնել: Այսօր Լիօնում մի մեծ աղմուկ է տեղի ունեցել, խռովարարները խանութները կողոպտել և այրել են: Սանդօն խոստովանել է, որ այդ սպանման գործի մէջ իրան յորդորող չի եղել, սակայն հաւատ չի ընծայւում և քննութիւնները դեռ շարունակւում են: Ֆրանսիայի նախարարները այսօրուայ (յունիս 26) նիստի մէջ որոշել են որ Ֆրանսայում և Ֆրանսայից դուրս բոլոր տէրութեան ծովային և ցամաքային ամեն կարգի ծառայողները ամբողջ երեսուն օր սգոյ նշաններով պտտեն: Այսօր (յունիս 27) Փարիզում նախագահի ընտրութեան ժողովում, 451 անդամ քուէ են տուել Կազիմիր Փէրիէին, 191 քուէ Բրիսօնի և 91 քուէ Դիւպիւիին: Կազիմիր Փէրիէն, Ֆրանսայի հասարակապետութեան նոր նախագահը, այժմեան նախարարներից խնդրել է որ իւրեանց պաշտօններում հաստատ մնան, բայց դժուար է երեւում, որ նախարարները այդ խնդիրը ընդունեն: Արմատականները Կազիմիր Փէրիէի ընտրութիւնը հասարակապետութեան շահերի համար վնասակար են համարում: Կարնօյի սպանողի ընկերներից մի քանիսը Մօնբէլիէում ձերբակալել և բանտարկել են: Ձերբակալութեան միջոցին նրանցից մէկը իրան սպանել է:

—Նոյն տեղից հեռագրում են որ, Եւրոպական անիշխանականների դասը Կարնօյի սպանման առթիւ ուրախութիւն յայտնելով ասել են որ դա մէկ փոխարինութիւն և վրէժ էր Ռավաշոլի և Վայեանի մահուանը: Կարնօյի մարմինը մեծ պատւով դրուել է Էլիզէի արքունի պալատում, բազմաթիւ մարդիկ ամեն օր հաւաքւում են դագաղի շուրջը իրանց յարգանքը մատուցանելու և մօտաւորապէս երկու հազար կաղ տեղ մի անձայն բազմութիւն է սիրում և սպասում է որ ամեն մէկը իւր հերթին երթայ յարգանքները մատուցանելու:

„ՇԱՒԻՂԻ“ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Դավրէժ.—Բ. Տ. Ս. Ձեր Ղարադաղի նկարագրութիւնը կը տպագրուի: Նոյնատեսակ նկարագրութիւններ շարունակեցէք գրել:

Ն. Ջուղա.—Գ. Կ. Մ. Ջ. Հնդկաստանից վերադարձած կրթուած երիտասարդների մասին Ձեր գրուած յօդուածը ի պատասխան „Շաւիղի“ 9-երորդ թուի խմբագրականին, որովհետև նորա հետ ոչ մի կապ չունէր և նորա մէջ յայտնուած մտքերին հակառակ հաստատող ոչ մի փաստ և ապացոյց չը կար, չը հրատարակուեցաւ:

Ն. Ջուղա.—Նոյնին. „Հայ լուսաւորութեան հարիւրամեակի պատկեր“ ի բաժանորդագրութիւնը կանխիկ է, և այդ պատկերից կունենան այն բաժանորդները, որ մեր խմբագրութիւնից, «Հանդէս Ամսօրեայի» խմբ. ընկալագիրը կունենան:

Արտօնատէր—Հրատարակիչ
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„Սէր“ ընկերութիւնը բաց է անում գրավաճառանոց Դաւրէժում և կոմիսիօնով ընդունում է ուսումնարանական ամեն տեսակ դասագրքեր, գրքեր և առարկաներ: Պայմանների մասին դիմել,

Tauris (Perse) Comité d'Instruction arménienne „SER“

„ՄՈՒՐՃ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1894 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է

Տարեկան գինն է 10 րուբլի

Բաժանորդագրութեան համար դիմել՝ խմբագրութեանը Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“.

Թէհրանի Հայկական երկսեռ դպրոցի համար հարկաւոր է մի ուսուցիչ, կրօնի, հայոց լեզուի, հայոց պատմութեան, թուաբանութեան և աղջկերքի:

Մի վարժուհի, կար ու ձևի, ձեռագործի, հայոց լեզուի, և թուաբանութեան ամեն մէկը շաբաթական 26 ժամ դասով: Պահանջում է կանոնաւոր դպրոցի վկայական: Պայմանների համար դիմել „Շաւիղի“ խմբագրութեան:

Ամեն տեսակ եւրոպական ճարեր կը գտնուին բժիշկ ԲԱԶԻԼԻ դեղատանը Լալէզար փողոցում Թէհրանում. տասն թումանաչափ և աւելի գնողի համար, սովորական արժէքից զիջում կը լինի: Գիշեր ժամանակում ևս դեղատունը բաց է: